Արձանագրություն N 5

ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-18/023 ծածկագրով էլեկտրոնային աճուրդով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար քարթրիջների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

26 դեկտեմբերի 2018թ.
ժամը 10:00

Մասնակցում էին՝
Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Գայանե Օսիպյանը,
Անդամներ՝ Հասմիկ Վանյանը և Մագդա Կարապետյանը.
Քարտուղար՝ Արթուր Բադալյանը:

Օրակարգ
ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-18/023 ծածկագրով գնման ընթացակարգի մասին

ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-18/023 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Գայանե Օսիպյանը նիստը հայտարարեց բացված և արձանագրեց, որ 23.11.2018թ. «Ռեֆորս Գրուպ» ՍՊԸ-ի կողմից բողոք է ներկայացվել ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, ում կողմից 25.12.2018թ. կայացվել է թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/99 որոշումը, համաձայն որի որոշվել է ներկայացված բողոքը մերժել:

Գնահատող հանձնաժողովի սույն թվականի նոյեմբերի 15-ի N 4 Արձանագրությամբ որոշվել էր «Ռեֆորս Գրուպ» ՍՊԸ-ին ճանաչել որպես ընտրված մասնակից 5-րդ չափաբաժնի համար և ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ: Հաշվի առնելով այն, որ ֆինանսական տարին ավարտվել է 20.12.2018թ-ին հանձնաժողովը հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37 հոդվածի 4-րդ կետը որոշեց.

-Պայմանագիր չկնքել և ընթացակարգի 5-րդ չափաբաժինը հայտարարել չկայացած:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Գ. Օսիպյան

գնահատող անդամներ՝ _____ Հ. Վանյան

_____ Մ. Կարապետյան

քարտուղար՝ _____ Ա. Բադալյան